ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- 3867

« 11 » մայիսի 2022թ.

ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ս. ԱԶԱՏՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի (այսուհետ՝ մասնակից) կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները՝

ա) ներկայացված հայտում բացակայում է **հայտի ապահովումը**.

բ) ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ հիշյալ հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ: Միաժամանակ հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի **«4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից լրացված են հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում հայտարարագրի **4.7.3.-րդ** դաշտում կատարված նշումն ավելորդ է:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **մայիսի 12-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Ընդ որում, հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով ներկայացվելու դեպքում մասնակիցը բանկային երաշխիքի բնօրինակը՝ **ուղեկցող գրությամբ** գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացնի մինչև սույն թվականի **մայիսի 12-ի՝ Երևանի ժամանակով ժամը 18:00-ն ներառյալ**:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի,

ինչպես նաև հիշյալ կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ձեր տվյալները՝ համապատասխան հիմքերով, կուղարվեն լիազորված մարմին՝ Ձեզ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788